



5 (160). ԺԵՏ ՈՒ ԱՂՎԵՍ

— Զա՛նըմ, հերք չէ՞ իդա մեր տանտիրոջ մունաթ-սունաթ քաշինք,— կըսին չիրարու ճետն ու շուն,— հա՛ մեր շուն աղեկ մուխիաթ չը մնա, հա՛ մեր ճետ վախտին չը կանչե, կըսե տանտեր, պառավ կը փնթփնթա,— չելի էրթանք սար՝ մըզի սարֆրա՞զ ապրինք, մըզի պետք չէ ո՛չ էն լալ, ո՛չ հատ ու կուտ:

Կէրթան սար: Ճետ գելնա վըր պալին կը թառի: Շուն լե պալի տակ կը պարկի: Աղոթրան օր կը բացվի՝ ճետ ղթևեր կը թփթփցու, կը կանչե.

— Կո՛ւկլուկու, լո՛ւս է:

Աղվես ճիտու ձեն օր կը լսե, կըսե. «Օ՛, ճրագով կը գաշենք, անճրագ ոստ էկավ, չըսօր աղեկ ագրատ մե գընկնա ձեռքսի»: Կը մոտենա պալին, գլուխ կիտա, կըսե.

— Օռչնա ի տեր, տերտե՛ր:

— Աստված օռչնե, օրգի՛, բարով էկար, է՛, ի՞նչ գինաս, օրես տերտեր իմ:

— Քու անուշ ձենից բելու է, օր դու տերտեր իս, էն լե ավադ տերտեր:

— Ի՞նչ գուզիս, օրգի՛:

— Էկեր իմ խոսիմ-խոստովանիմ, իմ մեղքերուն թողութեն էնիս:

— Շատ աղեկ, օրգի. հանդե իրիցփոխան պալի տակ պարկուկ է, ընտոնե հրամանք առ, արի վիրև, ըղբըզի խոստովանցում:

Աղվես, օր կը մոտենա իրիցփոխնին, շուն հա՛ֆ-հա՛ֆ կէնե,
կը թոնա դուս, քիչ կը մնա, օր ղաղվըսու պոչ խաֆլե: Աղվես կը
փախնի: Տերտեր-ճետ կը բոռա չետևեն.

— Արի՛, օրդի, արի՛, չո՛ւր կէրթաս առանց խոսել-խոստովա-
նելու:

— Հա՛յ, աստված զքու տուն ավիրե ու քու իրիցփոխնին, քա-
նի էդ հրմլա իրիցփոխան կը պահիս՝ մարդ չի գա քու մոտ խոստո-
վանի...

